ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«3» ապրիլի 2025 թվականի N: 132 - Ա ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԿՐԱՇԵՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 172-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի, 16-րդ հոդվածի 1.8-րդ մասի «ա» կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 2.2-րդ և 6-րդ կետերի, նույն որոշմամբ սահմանված N 3 հավելվածի 61-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2025 թվականի ապրիլի 1-ին տրված ZX N 017990 անաշխատունակության թերթիկը և Աննա Մարտիրոսյանի 2025 թվականի ապրիլի 3-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աննա Մարտիրոսյանին տրամադրել հղիության և ծննդաբերության արձակուրդ՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 18-ը ներառյալ:

2. Աննա Մարտիրոսյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրաշենի հիմնական դպրոց» պետական ոչ

առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Գոհար Սերոբյանին:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է